ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՂՎԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեղվահովիտ համայնք, էլ. meghvahovit.lori@mta.gov.am

Ե-14
14.02.2017

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ա.Նալբանդյան

Ձեզ ենք ուղարկում Մեղվահովիտ համայնքի ավագանու թիվ 04-Ն որոշումը, համայնքի ղեկավարի թիվ 03-Ա և 04-Ա որոշումները

Առդիր 3 էջ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՇԱՀԲԱԶՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵՂՎԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեղվահովիտ համայնք, հասցե Մեղվահովիտ
հեռախոս 093079878

## ՈՐՈՇՈՒՄ

«09» փետրվարի 2017 թվականի N 04-Ն

## ՄԵՂՎԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասով, □Իրավական ակտերի մասին□ Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Մեղվահովիտ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Մեղվահովիտ համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել 2016 թվականի Մեղվահովիտ համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| Ազգանուն, Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Չիլինգարյան Ալեքսանդր | [signature] | | |
| Չիլինգարյան Զարուհի | [signature] | | |
| Իսպիրյան Լուսիկ | [signature] | | |
| Հարությունյան Գայանե | [signature] | | |
| Դումիկյան Վահան | [signature] | | |

Համայնքի ղեկավար՝ [signature] Հ. ՇԱՀԲԱԶՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## Մեղվահովիտ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեղվահովիտ համայնք, գ. Մեղվահովիտ
հեռ.՝ 093079878

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 13 » փետրվարի 2017 թվականի N 03 - Ա

### ՄԵՂՎԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին և Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին համապատասխան՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2017 թվականի ընտրությունների անցկացման համար Լոռու մարզի Մեղվահովիտ համայնքի տարածքում տեղամասային կենտրոն սահմանել <<համայնքի կենտրոնի շենքը>> (հասցեն՝ 1-ին փողոց, շենք 22 ):
2. Սույն որոշման մասին տեղեկացնել՝ << ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տարածքային ստորաբաժանմանը, թիվ 25 տարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.ՇԱՀԲԱԶՅԱՆ

2017 թ. Փետրվարի13

Գ. Մեղվահովիտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՄԵՂՎԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեղվահովիտ համայնք, գ.Մեղվահովիտ
հեռ.՝ 093079878

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 14 » փետրվարի 2017 թվականի N 04 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻՄԵՂՎԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂ(ԵՐ) ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասին և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին համապատասխան՝

որոշում եմ.

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2017 թվականի ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին նախընտրական քարոզչություն իրականացնելու համար քարոզչական պաստառներ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղ(եր)ը՝

1) Բնակելի շենք՝ հասցեն 1-ին փողոց, շենք 11
2) Բնակելի շենք՝ հասցեն 1-ին փողոց, շենք 31

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.ՇԱՀԲԱԶՅԱՆ